ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «25» 01 2021 թ № 29-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 512-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ Ն-01 ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով, ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման 18-րդ կետի 21-րդ ենթակետով և հիմք ընդունելով լաբորատորիաների և տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների հավատարմագրման տեխնիկական կոմիտեի 2021 թվականի հունվարի 11-ի N 2/1 որոշումը, համապատասխանության գնահատման մարմինների նշանակման համար ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության, նշանակման ոլորտի սահմանման, ինչպես նաև նշանակման կասեցման կամ չեղյալ հայտարարման համար ստեղծված աշխատանքային խմբի 2021 թվականի հունվարի 20-ի աշխատանքային հանդիպման N 4 արձանագրությունը և «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի 2021 թվականի հունվարի 19-ի N ԱՕ-32 գրությունը.

հրամայում եմ.

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2017 թվականի հունիսի 6-ի ««Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային մի շարք ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և

ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2015 թվականի հունվարի 27-ի N 34-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»» N 512-Ա հրամանը:

2. «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիայի N-01 նշանակման վկայականի գործողությունը դադարեցնել:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային իրազեկելու օրվան հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ Վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վ. Սիմոնյանին:

1/29/2021

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ